Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ

Մաղթում ենք հաջողություն:

Հրահանգ

- **Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-13, 25.1-25.3)**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Ոչ մի այլ նշում չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Վրաստանի սահմանադրության համաձայն, ո՞ր իրավազորությունից *էգուրկ* նախագահը:

ա) Դատապարտյալներին ներում շնորհելու

բ) Կառավարությունը գլխավորելու

գ) Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակելու

դ) Օրգանական օրենքով սահմանված կարգով քաղաքացիության հարցերը լուծելու

2. Ո՞ր հատկանիշը *բնորոշ չէ* կապիտալիստական էկոնոմիկային:

ա) Ապրանքն արտադրվում է շուկայում գոյություն ունեցող պահանջարկի և մատակարարման համապատասխան

բ) Արտադրական ունեցվածքը մեծ մասամբ մասնավոր սեփականության մեջ է

գ) Ավելի մեծ շահույթ ստանալու ցանկությունը ձեռնարկատիրության և աշխատանքի շարժառիթ է համարվում

դ)Արտադրական ռեսուրսների բաշխումը պետության կողմից իրականացվում է կենտրոնացված կարգով

3. Կոնֆլիկտային իրավիճակում վարքագծի ո՞ր մոդելն է բնութագրվում բարձր ասերտիվությամբ և ցածր գործընկերությամբ:

ա) Համագործակցությունը

բ) Համակերպումը

գ) Մրցակցությունը

դ) Փոխզիջումը

4. Ո՞ր եվրոպական պետությունը *չի համարվում* դաշնություն՝ վարչատարածքային կազմակերպմամբ:

ա) Բելգիան

բ) Իտալիան

գ) Ավստրիան

դ) Գերմանիան

5. Քաղաքացիության մասին դատողություններից, ո՞րը *չի համապատասխանում* Վրաստանի սահմանադրությանը:

ա) Վրաստանի քաղաքացիությունը ձեռք է բերվում ծննդյան բերումով կամ հպատակագրման (նատուրալիզացիա) միջոցով

բ) Վրաստանի քաղաքացուն հանձնել այլ երկրին արգելվում է, բացառությամբ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերի

գ) Վրաստանում արգելվում է սահմանափակել այլ պետությունների քաղաքացիների և քաղաքացիությունից զուրկ անձանց քաղաքական գործունեությունը

դ) Վրաստանից արգելվում է վտարել Վրաստանի քաղաքացիներին

6. Ինչպե՞ս է կոչվում օգտակարության սկզբունքի վրա հիմնված ուսմունքը, որը կենտրոնացած է գործնական հանգամանքների և նպատակների վրա:

ա) Իդեալիզմ

բ) Պրագմատիզմ

գ) Թեիզմ

դ) Նիհիլիզմ

7. Դիագրամում ներկայացված է ամերիկացի ակտիվիստ և քաղաքական գործիչ Դեվիդ Նոլանի կողմից ստեղծած քաղաքական հայացքների սպեկտրը: Ի՞նչ պետք է գրվի հարցական նշանի փոխարեն:



ա) կոմունիստական

բ) միապետական

գ) սոցիալիստական

դ) լիբերտարիանական

8. Ո՞ր դատողությունն է համապատասխանում խորհրդարանի անդամների ազատ հանձնագիր (մանդատ) հասկացության բովանդակությանը:

ա) Խորհրդարանի անդամը իրավասու է՝ հարցով դիմել կառավարությանը

բ) Ընտրողը չունի խորհրդարանի անդամին վաղաժամկետ հետկանչի իրավունք

գ) Խորհրդարանի անդամն ունի գիտական և մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունք

դ) Խորհրդարանի անդամ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող ցանկացած քաղաքացի

9. Ի՞նչ է ենթադրում ներկուսակցական ժողովրդավարության սկզբունքը:

ա) Կուսակցությունների միջև հասնել ընդհանուր հայտարարի

բ) Հիերարխիկ սկզբունքի պահպանում կուսակցական որոշում կայացնելու ընթացքում

գ) Նախընտրական գործընթցում կուսակցությունների միջև հավասար մեկնարկային դիրքի ապահովում

դ) Կուսակցական որոշում ընդունելու ընթացքում կուսակցության յուրաքանչյուր անդամի ներգրավվածության աստիճանն ու մեթոդները

10. Ինչպե՞ս է կոչվում այս կամ այն մշակութային խմբի անդամների կողմից սեփական առաթ-սովորույթները ունիվերսալ համատեքստում քննարկելը և դրանց հիման վրա մյուս մշակույթները դատապարտելը:

ա) Ռելյատիվիզմ

բ) Պլյուրալիզմ (բազմակարծություն)

գ) Էթնոցենտրիզմ

դ) Մուլտիկուլտուրալիզմ (բազմամշակութայնություն)

11. Ո՞ր քաղաքական մտածողի աշխատության հետ է կապված «իշխանությունների բաժանման» ուսմունքի մանրակրկիտ մշակումը, որը հետագայում մեծ ազդեցություն գործեց Ամերիկայի հիմնադիր հայրերի մտքերի վրա:

ա) Թոմաս Հոբսի «Լևիաթանի»

բ) Նիկոլլո Մաքիավելիի «Տիրակալի»

գ) Շառլ Լուի դը Մոնտեսքյոի «Օրենքների ոգու մասին»

դ) Ջոն Ստյուարտ Միլի «Ազատության մասին»

12. Դիագրամն արտացոլում է տարբեր ինստիտուցիաների նկատմամբ Վրաստանի քաղաքացիների վստահությունը.



Ո՞ր դատողությունը *չի համապատասխանում* դիագրամի տվյալներին:

ա) 2017 թվականին ինստիտուցիաների նկատմամբ վստահության ցուցանիշը 2008 թվականի հետ համեմատ չի աճել

բ) 2008 թվականից 2017 թվականը ինտիտուցիաների թվում վստահությունն ամենից շատ նվազեց դատական համակարգի նկատմամբ

գ) 2017 թվականին խորհրդարանի, դատական համակարգի և ոչ կառավարական կազմակերպությունների նկատմամբ վստահության ցուցանիշը գրեթե հավասարվեց

դ) Կրոնական ինստիտուցիայի նկատմամբ վստահությունը 2011-2017 թվականներին նվազեց, իսկ ոստիկանության նկատմամբ՝ 2015-2017 թվականներին աճեց

13. Առաջադրանքում տրված են 2017 թվականին Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների և շրջանավարտների մասնագիտական զարգացման մասին հետազոտության արդյունքները.

- Աշխատանքային նկարագրությունների 74,3%-ը որպես պարտադիր պահանջ է նշում աշխատանքային փորձը, թեև 40,6%-ը չի ճշգրտում փորձի տևողությունը, 9,6%-ը պահանջում է առնվազն 1 տարվա, իսկ 9%-ը՝ առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ:
- Հայտարարված թափուր աշխատատեղերի 47.7%-ի համար պարտադիր պահանջ է բակալավրի կրթությունը, 4,3%-ի համար՝ մագիստրոսի, 18.6%-ի համար անհրաժեշտ չէ որևէ որակավորում:
- Հարցվածների 64.1%-ը որպես աշխատանքը սկսելու նախապայման է նշում գործնական գիտելիքը, 44%-ը՝ տեսական գիտելիքը, 21,9% -ը՝ ծանոթ, որն ապահովում է աշխատանքի ընդունումը:

Տվյալների հիման վրա կայացված ո՞ր եզրակացությունն է ճիշտ:

ա) Աշխատանքային շուկան կենտրոնացված է ցածր աստիճանի կրթություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելու վրա, ինչը բարձր աշխատավարձ առաջարկելու հիմքն է:

բ) Աշխատանք փնտրողները կարևորում են գործնական գիտելիքը, սակայն գործատուների համար տեսական խորը գիտելիքների առկայությունն առավել արժեքավոր է:

գ) Չնայած նրա, որ աշխատանքային փորձի առկայությունը մեծացնում է աշխատանքի ընդունվելու հնարավորությունները, գլխավոր գործոնը ծանոթ ունենալն է, որն ապահովում է աշխատանքի ընդունելը:

դ) Աշխատանքի հնարավոր է ընդունվել առանց որևէ որակավորման, սակայն գործատուների մեծամասնության համար աշխատանքային փորձը պարտադիր նախապայման է համարվում:

Հրահանգ

Հաջորդականության սահմանում (№14)

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Ի նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

14. (1) Սխեմայում ներկայացված Վրաստանի իրավական ակտերը դասավորեք հիերարխիկ հաջորդականությամբ.

1. Օրգանական օրենք
2. Նախագահի դեկրետ
3. Սահմանադրական համաձայնագիր
4. Սահմանադրություն
5. Միջազգային իրավական ակտ, որին միացել է Վրաստանը

	3*			

* Աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը

Հրահանգ

Համապատասխանության որոշում (№15-17)

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունը այս երկու սյունակներում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

15. (1) Քարտեզի վրա տարբեր գույներով նշված են կառավարման տարբեր ձևեր ունեցող չորս երկրներ: II սյունակում տրված քարտեզի լեգենդի (պայմանական նշաններ) գույները համապատասխանեցրեք I սյունակում ներկայացված երկրների կառավարման ձևերին.



I. Կառավարման ձև	II. Քարտեզի լեգենդի գույնը
ա. Նախագահական հանրապետություն	1.
բ. Խորհրդարանական հանրապետություն	2.
գ. Սահմանադրական միապետություն	3.
դ. Բացարձակ միապետություն	4.

16. (2) II սյունակում ներկայացված կարևոր պատմական անձանց համապատասխանեցրեք I սյունակում նշված քաղաքական տեսություններին.

I. Քաղաքական տեսություններ	II. Կարևոր անձինք
ա. Կոմունիզմ	1. Ջեյմս Մեդիսոն
բ. Պացիֆիզմ	2. Ադամ Սմիթ
գ. Կապիտալիզմ	3. Էդմոնդ Բյորկ
դ. Ֆեդերալիզմ	4. Մաո Ցզե Դուն
ե. Կոնսերվատիզմ	5. Մահաթմա Գանդի

17. (1) II սյունակում տրված խորհրդապատկերները համապատասխանեցրեք I սյունակում նշված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ծրագրերին և հիմնադրամներին.

I. Ծրագրեր և հիմնադրամներ	II. Խորհրդապատկերներ	
ա. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ բ. Պարենի համաշխարհային ծրագիր գ. ՄԱԿ-ի շրջակա միջավայրի պահպանության ծրագիր դ. ՄԱԿ-ի կանանց զարգացման հիմնադրամ ե. ՄԱԿ-ի փախստականների բարձրագույն կոմիսարիատ	1.	4.
	2.	
	3.	5.

Հրահանգ

Սխալի ուղղում (№18)

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն): Բացահայտեք և ուղղեք դրանք: Բացահայտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում): Ի նկատի ունեցեք, որ յուրաքանչյուր բացահայտված սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

18. **(7) Ուշադիր կարդացեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.**

Խորհրդային կառավարման բռնի համակարգը

1918 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան մեծ հեղափոխություն անվանմամբ հայտնի քաղաքական իրադարձությունից հետո, Ռուսաստանի իշխող կուսակցությունը սկսեց իրականացնել տարբեր սոցիալական խմբերի հետապնդումներ: Օրինակ, ժողովրդի թշնամիներ հռչակվեցին խոշոր ձեռնարկատերերը, ընդդիմադիր քաղաքական գործիչները և մի խոսքով բոլոր նրանք, ովքեր հակադրվում էին մենշևիկյան կուսակցությանը:

Կոմունիստական գաղափարներն իրականացնելու համար անհրաժեշտ դարձավ անցկացնել տնտեսական մեծ բարեփոխումներ: Այդ բարեփոխումներին, որոնք ենթադրում էին մեծահարուստ հողատերերի գույքի բռնագրավում, անցում պլանային տնտեսությանը և արագ ինդուստրացում, հաջորդեց բնակչության զանգվածային սովը: Այդ սովն անդրադարձավ հատկապես Ուկրաինային, որտեղ ըստ տարբեր տվյալների սովի հետևանքով մահացավ քանի միլիոն ուկրաինացի: Որոշ պատմաբաններ այս իրադարձությունը համարում են ոչ թե ուղղակի պարենային քաղաքականության ձախողում, այլ ուկրաինական ժողովրդի զանգվածային ոչնչացման ակտ: Այս կոնկրետ պատմական իրադարձությունը հայտնի է հոմոֆոբիա անվամբ:

Խորհրդային իշխանությունը չէր վարանում նաև ժողովուրդներին վերաբնակեցնելուց: Օրինակ, Մեսխեթիից բնիկ մուսուլման բնակչության տեղահանություն (դեպորտացիա) իրականացվեց Կենտրոնական Ասիա: Ռուսաստանի Կայսրությունում նմանն ընդունված պրակտիկա էր նաև նախքան Խորհրդային Միությունը:

Անցում տեքստի երկրորդ էջին

Օրինակ տասնիններորդ դարավերջին Ռուսաստանը հայրենիքից զանգվածաբար վերաբնակեցրեց չերքեզներին: Ընդունված է, որ նրանց նկատմամբ հետապնդումն իրականացվել է էթնիկ նշանով: Այս վերաբնակեցումը խլեց բազմաթիվ չերքեզի կյանք: Ողբերգության մասշտաբներից ելնելով, Վրաստանի խորհրդարանը նշյալ իրադարձությունը 2011 թվականին պաշտոնապես ճանաչեց, որպես Հոլոքոստ:

Վերաբնակեցումից բացի, Խորհրդային Միությունում գոյություն ունեին ինդուլգենցիայի այլ ձևեր ևս՝ գնդակահարում, ձերբակալում: Ձերբակալումներն այնքան մասշտաբային էին, որ անհրաժեշտ դարձավ հիմնել ուղղիչ աշխատանքային ճամբարներ և գաղութների գլխավոր վարչություն, որը հայտնի է գետտո անվամբ: Այս պատժիչ համակարգը տարածված էր ամբողջ Խորհրդային Միության տարածքում և հենց այս ճամբարներում գոյություն ունեցող ծանր պայմանները խլեցին բազմաթիվ մարդու կյանք: Այդ թվում էին մի շարք ականառու վրացի գործիչներ:

Բռնի գործողություններ էին կիրառվում նաև տեղեկատվության տարածումը սահմանափակելու համար: Նախքան որևէ հրապարակում կամ աշխատություն հրապարակելը այն պետք է անցներ հատուկ ստուգում և եթե հանձնաժողովն այն կհամարեր ոչ պիտանի, այն չէր հրապարակվի: Ցավոք, պետության կողմից նման արբիտրաժի ենթարկվեցին շատ գրական և գիտական ստեղծագործություններ, որոնց հրապարակումն արգելվում էր Խորհրդային դարաշրջանում:

Վերադառնալ տեքստի առաջին էջին

Հրահանգ

Սխալի ուղղում (№19)

Առաջադրանքում տրված է մեկ թեմայի հետ կապված երկու տեքստ: Երկու տեքստն էլ պարունակում են փաստացի սխալներ: Ձեր խնդիրն է վերլուծել տեքստերը, հայտնաբերել սխալները, և գնահատել տեքստերը նախապես տրված սխեմայով սահմանված չափանիշներով: Գնահատումը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

19. (6) Առաջադրանքում տրված է «Ժողովրդավարություն և քաղաքացիական մասնակցություն» թեմայով երկու տեքստ: Տեքստերը կարող են պարունակել փաստացի սխալներ: Ծանոթացեք տեքստերին, վերլուծեք դրանց բովանդակությունը և գնահատեք առաջարկված չափանիշներով:

I տեքստ.

Ժողովրդավարական պետությունում ընտրությունների ճանապարհով իշխանության պարբերական փոփոխականությունը պայմանավորված է որոշակի պատճառներով: Նման պատճառներից մեկը հասարակական կարծիքի փոփոխությունն է: Կարևոր է նաև, որ իշխանության մեջ երկարատև իշխանական ուժ չտրվի միևնույն մարդկանց, քանի որ այդ դեպքում կբարդանա հասարակության կողմից նրանց վերահսկումը:

Քաղաքացիների կողմից ընտրություններին գիտակցված ընտրություն իրականացնելու նպատակով, ազատ և ժողովրդավարական պետությունում երաշխավորված է մարդու տեղեկատվության ազատության իրավունքը: Յուրաքանչյուր քաղաքացի ունի ոչ միայն պասիվ՝ փնտրել, ձեռք բերել և ստանալ տեղեկատվություն, այլ նաև ակտիվ իրավունք: Վրաստանում այդ իրավունքի պաշտպանության կարևորագույն երաշխիքը սահմանադրությունն է: Այդ իրավունքից օգտվելով հնարավոր է դառնում քաղաքացու ակտիվ մասնակցությունը քաղաքականության մեջ:

Հասարակության մեջ առկա խնդիրների և հարցերի կարգավորման հարցում քաղաքացիների ներգրավվածությունը կոչվում է քաղաքացիական մասնակցություն: Առանձնացնում են մասնակցության տարբեր աստիճաններ, այդ թվում կարծիքով կիսվելը, որը ենթադրում է ոչ միայն ստանալ տեղեկություն, այլ նաև մշակել և տարածել մյուսներին: Քաղաքացիական մասնակցության բարձրագույն աստիճանն է համարվում, այսպես կոչված, արտաքին նախաձեռնությունը, որը խոսում է առանց արտաքին միջնորդության քաղաքացիների ինքնակազմակերպման հմտության մասին:

Անցնել II տեքստին *Անցնել գնահատման սխեմային*

II տեքստ.

Ժողովրդավարական պետությունում քաղաքացիներն ակտիվ քաղաքական գործունեությամբ իրենց համար սահմանում են իրավական շրջանակներ: Նրանք անձամբ են որոշում, թե որ քաղաքական ուժն է կանգնելու իշխանության գլուխ: Այդ պատճառով բոլոր ժողովրդավարական երկրներում պարբերաբար անցկացվում են ընտրություններ, ինչը տարբեր հայացքներ ունեցող քաղաքական խմբերին հնարավորություն է ընձեռում հերթագայությամբ փորձել իրենց հայացքների իրականացումը:

Երկրի ժողովրդավարականությունը որոշվում է նաև տեղեկատվության ազատության որակով: Այս տեսանկյունից Վրաստանի սահմանադրությունը չափազանց ժողովրդավարական է, քանի որ այս փաստաթղթի համաձայն, բոլոր մարդիկ ունեն տեղեկատվությունն ազատ տարածելու իրավունք, որը մատնանշում է նրա պասիվ ազատության մասին: Այս իրավունքից օգտվում են բոլոր քաղաքացիները, ինչն անհրաժեշտ տարր է կազմում քաղաքական և հասարակական կյանքում ակտիվ համամասնակցության համար:

Քաղաքացիական մասնակցությունը ենթադրում է քաղաքացիների ներգրավվածություն սոցիալական միջավայրում բազմաթիվ խնդիրներ և հարցեր կարգավորելու նպատակով: Մասնակցության աստիճաններում կարող ենք առանձնացնել. Տեղեկացում՝ տեղեկատվություն ստանալ այս կամ այն հարցի վերաբերյալ, խորհրդատվություն, ներքին նախաձեռնություն՝ կարևոր որոշումների ընդունում առանց ճնշման և հիմնախնդրի որոշում-կարգավորում սեփական ուժերով:

Վերադառնալ I տեքստին

Անցնել գնահատման սխեմային

Ծանոթացեք գնահատման սխեմային և երկու տեքստը գնահատեք տրված չափանիշների համաձայն: Գրեք համապատասխան միավոր գնահատման սխեմայի յուրաքանչյուր չափանիշի համար առանձին-առանձին:

	I.Չափանիշներ	II. Առավելագույն միավոր	III. Միավորներ շնորհելու սկզբունք
A.	**Ընտրությունների պարբերականության պատճառները**	3	Յուրաքանչյուր ճիշտ անվանած պատճառը՝ 1 միավոր
B.	**Տեղեկատվության ազատության պասսիվ և ակտիվ ասպեկտները**	2	Յուրաքանչյուր ճիշտ անվանած և պարզաբանած ասպեկտը՝ 1 միավոր
C.	**Քաղաքացիական մասնակցության աստիճանը**	5	Յուրաքանչյուր ճիշտ անվանած և պարզաբանած աստիճանը՝ 1 միավոր

Ձեր կողմից շնորհված միավորները գրեք պատասխանների թերթիկում տրված աղյուսակում.

		A	B	C
19.1	I տեքստի գնահատում			
19.2	II տեքստի գնահատում			

Վերադառնալ I տեքստին *Վերադառնալ II տեքստին*

Հրահանգ

Առաջադրանք՝ բաց վերջավորությամբ (№20, 21, 22, 23, 24, 25.4-25.7)

Առաջադրանքում տրված է հարց, որին կցված չեն ենթադրական պատասխաններ: Ուշադրությամբ կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Պատասխանը պետք է լինի հարցին համարժեք և կոնկրետ: Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով:

20. **(5) Սխեմայում ոչ լիարժեք կերպով են պատկերված մարդու իրավունքների զարգացման աստիճաններն ու պատմությունը: Լրացրեք սխեմայի դատարկ վանդակները:**

	Քաղաքական կատալիզատոր	Սահմանում	Օրինակներ	Միջազգային փաստաթղթեր
Առաջին սերունդ	Ֆրանսիական հեղափոխություն	Քաղաքացիական Քաղաքական	20.1	1966 թվականի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
Երկրորդ սերունդ	Ինդուստրացում Կոմունիցմի ալիք	20.2	Կրթության իրավունք Աշխատանքի իրավունք	20.3 1966 թվականի ...
Երրորդ սերունդ	Գլոբալիզացիա	20.4	20.5	1972 թվականի մարդու շրջակա միջավայրի մասին Ստոկհոլմի հռչակագիր 1992 թվականի շրջակա միջավայրի և զարգացման մասին Ռիոյի հռչակագիր

21. (3) Տրված է Համախառն ներքին արդյունքի համաշխարհային քարտեզ՝ 2014 թվականի տվյալներով: Վերլուծեք քարտեզն ու պատասխանեք հարցերին.



21.1 Ի՞նչն է կոչվում Համախառն ներքին արդյունք:

21.2 Ի՞նչ է մատնանշում քարտեզի վրա լեգենդի (պայմանական նշան) սև գույնը:

21.3 Քարտեզի վերլուծության հիման վրա կարող ենք արդյո՞ք գալ եզրակացության, որ բարձր Համախառն ներքին արդյունքը ժողովրդավարականության բարձր որակի երաշխավորն է: Ձեր պատասխանը հիմնավորեք:

22. **(5) Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտուն տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.**

I. Որոշեք և գրառեք I խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից *(Առաջադրանք 22.2)*

II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք Ձեր կարծիքով, նպաստում են աղյուսակում տրված II խնդրի կատարմանը *(Առաջադրանք 22.3)*

III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հնարավոր է հասնել նախագծի երկու խնդրի և դրանց իրականացման ուղիներից ելնելով: *(Առաջադրանք 22.1)*

22.1	**Նախագծի նպատակը.** *(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով)*
22.2	**Նախագծի I խնդիրը.** *(Սահմանեք և գրեք կոնկրետ խնդիր, ելնելով I խնդրի իրականացման ուղիներից)* **Նախագծի II խնդիրը.** ***Աշակերտների մոտ ձևավորել մշակութային բազմազանության մասին դրական տրամադրություններ:***
22.3	**I խմնդրի իրականացման ուղիներ** 1. Դասախոսություն խտրականության տարբեր ձևերի մասին 2. Հանդիպում ժողովրդական պաշտպանի հետ 3. Դասարանային պաստառ. «Խտրականության օրինակներ համաշխարհային պատմության մեջ» **II խնդրի իրականացման ուղիներ** *(Գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղի)*

23. (3) Ծանոթացեք նկարին և պատասխանեք հարցերին.

Գրառում գերմաներեն լեզվով «Նա է պատերազմի մեղավորը»

23.1 Ո՞րն է տրված նկարի բովանդակությունը և ո՞ր էթնիկ խումբն է ներկայացնում մեղադրյալը:

23.2 Ինչպե՞ս է կոչվում նման նկարների զանգվածաբար տարածումը և ո՞րն է դրա նպատակը:

23.3 Ո՞ր տերմինով է նշվում տրված նկարում պատկերված ռասսայական խտրականության ձևը և դատողություններ արեք այս խտրականության պատմական արդյունքների շուրջ:

24. (5) Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև տրված ցուցումների համապատասխան.

«Կառավարման ձևերից մեկն այն է, որտեղ կառավարությունը տնօրինում է և՛ պետության, և՛ հասարակության համար անհրաժեշտ գործերը, ամենուր և յուրաքանչյուր հատվածում: Այս դեպքում կառավարությունը ցանկացած գործի սկիզբ դնողն ու գլուխ կանգնողն է, յուրաքանչյուր գործի վարողը, ամեն ինչի ապահովողն ու ղեկավարողը, այնպես որ ամեն ինչ սկսվում է նրանից և ամեն ինչ կցված է նրան: Նման ղեկավարման համար նա ունի իր սեփական պաշտոնյաները, որոնց անձամբ է ընտրում, անձամբ նշանակում, անձամբ պաշտոնազուրկ անում, և նրանք պատասխանատու են միայն իր առջև […]

Երկրոդ ձևի կառավարումն այն է, որտեղ կառավարությունն իր ձեռքում է պահում միայն պետության համար անհրաժեշտ բոլոր գործերը, իսկ մյուս ամեն ինչը պատկանում է հասարակությանը և յուրաքանչյուր հատվածին վստահված են իր տեղական գործերը, որոնց արգելվում է միջամտել: Հասարակության համար անհրաժեշտ տեղականորեն բաշխված այս գործերը տնօրինվում են անկասկած տեղի պաշտոնյաների օգնությամբ, որոնց ընտրում է հենց այս տեղանքի հասարակությունը և որոնք պատասխանատու են այդ նույն հասարակության առջև:

«Կյանք և օրենք», Իլիա Ճավճավաձե, 1884 թվական

24.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և արդիականության մասին:

24.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը պաշտպանելու համար:
B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է կրի էականորեն անկախ միտք)

25. **(8) Վերլուծեք ներկայացված աղբյուրները և պատասխանեք հարցերին.**

Աղբյուր N1

«Կանայք ամենուրեք գտնվում են այս խղճուկ վիճակում, քանի որ իրենց առաքինությունը, նրբորեն ասած տգիտությունը, պահպանելու համար նրանցից թաքցնում են ճշմարտությունը, նրանք էլ իրենց հերթին ստիպված են հարմարվել արհեստական բնավորությանն այնքան, մինչև չամրապնդվեն իրենց հմտությունները: Նրանց մանկուց սովորեցնում են, որ իշխանությանը հասնում են գեղեցկությամբ և նրանց բանականությունը նույնպես հարմարվում է մարմնին, և իրենց ոսկեզօծ վանդակում ընկղմված, ձգտում են միայն նրան, որ գեղեցկացնեն այդ զնդանը: Տղամարդկանց ուշադրությունը կենտրոնացած է տարբեր գործունեությունների և ձգտումների վրա, որոնք ձևավորում են նրանց բանականությունը: Իսկ կանանց հիմնական մտահոգությունը պտտվում է ինչ-որ մի բանի շուրջ և նրանք անընդհատ մտածում են այն մասին, ինչը նրանց խառնվածքի համար ամենաանկարևորն է: Այդ պատճառով նրանց տեսակետը հազվադեպ է հեռանում անմիջապես ներկա շահերից: Սակայն եթե նրանց մտածողությունը երբևէ ազատվի այն ստրկությունից, որտեղ նրանք հայտնվել են մի կողմից տղամարդկանց ամբարտավանության ու անառակության, իսկ մյուս կողմից սեփական սահմանափակ ձգտումների պատճառով, այդ դեպքում, հավանաբար չենք խոսի նրանց թուլության մասին»:

«Կնոջ իրավունքների պաշտպանություն», Մերի Ուոլստոնկրաֆտ, 1759-1797

Անցնել աղբյուրներին՝ *2* *3* *4*

Անցնել առաջադրանքներին՝ *25.1* *25.2* *25.3* *25.4 - 25.7*

Աղբյուր N2

«Երբ աղջիկներն ու տղաները միասին խաղում են, նրանց միջև չի զգացվում որևէ մտավոր տարբերություն: Երբ մեծանում են և մեկն իր տաղանդն ու բանականությունը տանում է այն ուղղությամբ, որի հետ մյուսը ընդհանրապես ոչ մի կապ չունի, բնականաբար նրանց մտածողությունը ևս տարբեր ուղղություններ է ձեռք բերում և եթե նման ազդեցություն ունի աշխատանքի մասնագիտացումը, ապա դարերով հոգևոր կյանքից կտրված մարդկության կեսը, որտեղ ապրում էր իգական սեռը, զարմանալի չէ, որ մտավոր տեսանկյունից ավելի հետամնաց լինի, քան արական սեռը, որը մարդկության կյանքի միակ ղեկավարն է, թեև ավելի շուտ միակողմանի ղեկավարը: Մեր պայքարը հենց սեռերի բանականությունների միջև արհեստական տարբերությունը վերացնելու մեջ է կայանում:

«Վրաց ֆեմինիզմի անհայտ պատմություններ», Կատո Միքելաձե, 6 մայիսի, 1917 թվական

Անցնել աղբյուրներին՝ *1* *3* *4*

Անցնել առաջադրանքներին՝ *25.1* *25.2* *25.3* *25.4 - 25.7*

Աղբյուր N3

«Իգական սեռը մարդկության լավագույն ներկայացուցիչների գլխավորությամբ, երախտիքով և տքնանքով արդեն հաստատել է բարձրագույնում սովորելու և կրթություն ստանալու իր իրավունքը և այժմ միայն կույրերն ու խավարամիտներն են դեմ այդ իրավունքին: Իգական սեռը ձեռք է բերել իրավունքներ նաև պետական կամ հասարակական ծառայության որոշ ոլորտներում և չնայած նրա, որ դեռ շատ բան կա ձեռք բերելու, այնուամենայնիվ այն առաջին քայլն արդեն իսկ կարևոր է արդյունքին հասնելու համար: Անարդարությունը, որի պատճառով իգական սեռը՝ ողջ մարդկության կեսը, մինչ օրս դուրս չէր գալիս դայակությունից և խոհանոցից, որից բացի չէր զբաղվում այլ գործունեությամբ, ինչից ելնելով էլ չէր տալիս մի կտոր հաց վաստակելու հնարավորություն, երկար չի կարողանա դիմանալ մեկ անգամ սկսած շարժմանը»:

«Կանանց հարցերը» Իլյա Ճավճավաձե, 1888 թվական

Անցնել աղբյուրներին՝ *1* *2* *4*

Անցնել առաջադրանքներին՝ *25.1* *25.2* *25.3* *25.4 - 25.7*

Աղբյուր N4

- Հարցվածների 64%-ը նշում է, որ Վրաստանում այժմ գոյություն չունի գենդերային հավասարություն, նույն կարծիքի է երիտասարդության 68%-ը:
- Հարցվածների 55%-ի կարծիքով, 150 անդամից բաղկացած խորհրդարանում, 17 կին պատգամավոր ունենալը շատ քիչ է:
- Հարցվածների 70%-ը գտնում է, որ Վրաստանի խորհրդարանում կանանց թիվը պետք է կազմի առնվազն 30%:
- Հարցվածների 68%-ն ասում է, որ աջակցում է խորհրդարանի կողմից պարտադիր գենդերային քվոտայի կիրառմանը:
- Հարցվածների կեսը գտնում է, որ կին պատգամավորների թվաքանակի ավելացումը դրական ազդեցություն կունենա երկրի զարգացման վրա:

«Կանանց քաղաքական մասնակցությունը Վրաստանում» ազգային ժողովրդավարական ինստիտուտ, 2014 թվական

Անցում աղբյուրներին՝ 1 2 3

Անցնել առաջադրանքներին՝ 25.1 25.2 25.3 25.4 - 25.7

25.1 N4 աղբյուրի համաձայն՝

ա) Վրաստանի բնակչության մեծամասնությունը կարծում է, որ երկրում չկա գենդերային հավասարություն, սակայն երիտասարդության մեծ մասը հակառակ կարծիքի է:

բ) Կին քաղաքական գործիչները դրական ազդեցություն են գործում քաղաքականության վրա, այդ պատճառով էլ նրանց թիվը խորհրդարանում տարեց տարի զգալիորեն աճում է:

գ) Հարցվածների մեծամասնության համար գենդերային քվոտավորումն ընդունելի է, սակայն նրանց կարծիքով խորհրդարանում կին քաղաքական գործիչները պետք է կազմեն ընդհանուր թվաքանակի հինգերորդ մասը:

դ) Հասարակության մեջ գոյություն ունի այնպիսի զգացողություն, որ կին քաղաքական գործիչների ակտիվացումը կլինի դրական երևույթ և դրա համար քվոտավորումը լավ հնարավորություն է:

Վերադառնալ աղբյուրներին՝ 1 2 3 4 *Անցնել առաջադրանքներին՝ 25.2 25.3 25.4 -25.7*

25.2 Կատո Միքելաձեի կարծիքով՝

ա) Կնոջ և տղամարդու միջև բնական տարբերության պատճառով, նրանց սոցիալական կարգավիճակները նույնպես տարբերվում են:

բ) Չափահաս կանանց մտավոր տարբերությունը տղամարդկանցից պայմանավորված է դաստիարակության նկատմամբ մշակույթում առկա սեքսիստական վերաբերմունքից:

գ) Կանայք, ըստ էության, մտածում են ներընկալմամբ (ինտուիցիայով), ինչը տարբերվում է տղամարդկանց ռացիոնալ մտածողության կանոններից:

դ) Տղամարդիկ կտրված էին հոգևոր կյանքից, ինչն էլ նրանց մոտ առաջացրեց խստասրտություն:

Վերադառնալ աղբյուրներին՝ 1 2 3 4 *Անցնել առաջադրանքներին՝ 25.1 25.3 25.4 - 25.7*

25.3 Իլիա Ճավճավաձեն համարում է, որ՝

ա) Կանանց քաղաքական ներգրավվածությունը կրկին անխուսափելիորեն կաճի

բ) Կանայք հիմնականում հակված են տնային գործունեությանը

գ) Ուսում-կրթությունը կանանց հասանելի կդառնա այն բանից հետո, երբ նրանց քաղաքական գործունեությունը կլինի թույլատրված

դ) Համաշխարհային միտումը նախատեսում է համաշխարհային համատեքստ և Վրաստանը պետք է ընտրի իր զարգացման սեփական ուղին

Վերադառնալ աղբյուրներին՝ 1 2 3 4 *Անցնել առաջադրանքներին՝ 25.1 25.2 25.4-25.7*

25.4 Ի՞նչ է ենթադրում Մերի Ուոլստոնկրաֆտը «ոսկեզօծ վանդակը» փոխաբերությամբ:

25.5 Քննարկեք թե ի՞նչ հարաբերակցության մեջ են Մերի Ուոլստոնկրաֆտի և Կատո Միքելաձեի կարծիքները:

25.6 Ո՞ր հիմնախնդիրների առջև էին կանգնած կանայք տասնիններորդ դարում աղբյուր N3-ի համաձայն և փոխվել է արդյո՞ք այդ հիմնախնդիրների ընկալումը ժամանակակից Վրաստանում ըստ աղբյուր N4-ի:

25.7 Աղբյուր N4 համաձայն անվանեք կանանց քաղաքական մասնակցության աճման մեթոդը և բացատրեք այն: Փաստարկված դատողություններ արեք այդ մեթոդի արդյունավետության վերաբերյալ:

Վերադառնալ աղբյուրներին՝ 1 2 3 4

Վերադառնալ առաջադրանքներին՝ 25.1 25.2 25.3